«Երիտասարդ պատմագետների ասոցիացիա» ՀԿ-ի

EduArmenia կրթական նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման դասընթաց 2023

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ինչպե՞ս սովորողների մեջ զարգացնել տրամաբանական մտածողությունը հանելուկների ուսուցման միջոցով:

Հետազոտող ուսուցիչ՝ Սուսաննա Բաղեյան

(Գավառի Գ. Մնացականյանի անվան թիվ 7 միջնակարգ դպրոց)

ԳԱՎԱՌ 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 3

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ 6

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ..... 17

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.... 20

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ..... 22

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ..... 24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը:

ՀՀ հանրակրթական համակարգի՝ միջազգային չափանիշներին համապատասխանեցումը, նոր կրթակարգի ինտեգրումը պայմանավորում են նաև տարրական դասարաններում բանահյուսական նյութերի ուսումնասիրության՝ կրթական համակարգի նոր պահանջներին համապատասխանեցնելու անհրաժեշտությունը: Այս առումով հատկանշական է բանահյուսական նյութերի կիրառման ուսումնական գործընթացի արդիականացումը, ինչը ենթադրում է վերջինիս համապատասխանեցում հանրակրթության այլընտրանքային նոր մոտեցումներին և կրթական պահանջներին:

Դեռևս տարրական դասարաններից երեխաների առջև բացվում են բանահյուսության ուշագրավ էջեր, և նրանց են մատուցվում բանահյուսական գանձերի չքնաղ պատառիկներ: Մայրենիի դասընթացում նախատեսված է բանահյուսական գիտելիքների այնպիսի համակարգ, որը հենվում է մի կողմից՝ բանահյուսական նյութերի յուրահատկությունների, դրանց կրթադաստիարակչական նշանակության, մյուս կողմից՝ նախորդ նյութերի հետ փոխկապակցվածության ու սովորողների տարիքային առանձնահատկությունների վրա: Ժողովրդական մանրապատում ստեղծագործություններին՝ հանելուկներ, առածներ ու ասացվածքներ, շուտասելուկներ, առասպելներ, հեքիաթներ, առակներ, դարձվածքներ, մենք հանդիպում ենք կրտսեր դպրոցում՝ մայրենիի դասագրքերում:

Բանահյուսական նյութերի ուսումնասիրումը երեխաներին օգնում է հաղորդակից դառնալ գրականության տարբեր ժանրերում ամրագրված հոգևոր և բարոյական արժեքներին, դրանց արտահայտած գաղափարների շնորհիվ նրանք հավատում են բարու, արդարության գոյությանը և աշխարհի գեղեցկության հաղթանակին:

Երեխաների պատկերավոր մտածողությունը, ստեղծագործական միտքը, հաղորդակցական, համագործակցային և ինքնուրույն գործունեության

ունակությունները զարգացնելու, նրանց սոցիալականացմանը նպաստելու, ինչպես նաև տրամաբանական, ճանաչողական և երևակայական կարողություններ ու հմտություններ ձևավորելու նպատակով բանահյուսական նյութերը, մասնավորապես հանելուկները, ուսումնասիրելու գործընթացում արդիական են ուսուցման արդյունավետության բարձրացմանը միտված աշխատանքները: Առանձնակի կարևորվում են ուսուցման ինչպես ավանդական (ուսուցչի խոսք, զրույց, վերլուծություն), այնպես էլ ժամանակակից մեթոդների զուգակցումը, ինչն ընդգրկում է վերլուծում, մասնավորում, համադրում, վերացարկում, անդրադարձում, մակածում (ինդուկցիա), արտածում (դեդուկցիա), ընդհանրացում, կանխատեսում:

Ուսումնասիրության խնդիրներն են կրտսեր դպրոցականների տրամաբանական մտածողության զարգացումը, այդ ուղղությամբ արդյունավետ և համակարգված մեթոդների ընտրությունն ու կիրառումը:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել հայ ժողովրդական բանահյուսության ուսումնասիրման առանձնահատկությունները տարրական դպրոցում, ինչպես նաև կրտսեր դպրոցականի տրամաբանական մտածողությունը, կրթական փաստաթղթերով ներկայացվող պահանջները և տրամաբանական մտածողության զարգացման մեթոդները:

Ուսումնասիրության մեթոդները

- ✓ հետազոտական աշխատանքների իրականացում,
- ✓ հետազոտության մեթոդներ՝ դասերի դիտարկում, զրույց, բանավոր հարցումներ,
- ✓ մտածողության և երևակայության զարգացվածության մակարդակի ուսումնասիրում,
- ✓ առաջադրանքների և խաղերի կազմակերպում,
- ✓ դասի պլանավորում և վարում:

Անդրադարձել ենք հանելուկների կիրառմանը որպես տրամաբանական մտածողության զարգացման միջոց:

Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել դասվարների կողմից՝ մայրենիի դասերի ընթացքում՝ նպաստելով աշակերտների տրամաբանական

մտածողության զարգացմանը միտված արդյունավետ աշխատանքների իրականացմանը:

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Առաջին դասարանում կարևորվում է ժողովրդական բանահյուսության ամենատարածված տեսակներից մեկի՝ հանելուկի ուսումնասիրումը: Այդ գործընթացը նպատակաուղղված է երեխաների տրամաբանական և պատկերավոր մտածողության ձևավորմանը, ինչպես նաև առանձին իրերի, իրողությունների, բնության երևույթների, կենդանիների, նրանց բնորոշող հատկանիշների և բնութագրիչների մասին տեղեկություններ հաղորդելու գործառույթի իրականացմանը: Հանելուկը երեխաների ուշադրությունը կենտրոնացնում է այն բառերի վրա, որոնք նկարագրում են տվյալ առարկան: Դա հնարավորություն է տալիս հարստացնելու սովորողների բառապաշարը, ընդլայնելու նրանց պատկերացումները նկարագրվող առարկայի մասին, գեղագիտորեն ընկալելու այն: Սա էլ իր հերթին նպաստում է երեխաների գեղագիտական դաստիարակությանը: Հանելուկի վերծանմամբ զարգանում է երեխայի տրամաբանությունը, ձևավորվում եզրահանգում կատարելու կարողությունը, ինչն էլ նրա ստեղծագործական ունակությունների հիմքն է դառնում: Հանելուկների ուսումնասիրումը սերտորեն կապվում է ուսումնական հիմնական նյութի հետ, նպաստում դրա հեշտ յուրացմանը, դասանյութի առավել հետաքրքիր մատուցմանը: Երեխաները հանելուկի բովանդակած հատկանիշների համադրությամբ կարողանում են արտածել այն իրը, երևույթը կամ այս կամ այն կենդանուն, որոնց վերաբերում է հանելուկը: Հանելուկների պարզաբանման համար կարելի է աշակերտներին հանձնարարել թվարկել հանելուկում տրված գուշակման ենթակա առարկային բնորոշող այլ հատկանիշներ, և կամ հակառակը. ընտրել որևէ առարկա ու հանձնարարել դրա մասին հանելուկ հորինել՝ ելնելով առարկային բնորոշ մի շարք հատկանիշներից: Այնուհետև աշակերտների հորինած հանելուկներից ընտրվում է ամենահաջողվածը, որի շուրջ ուսուցիչը կազմակերպում է զրույց:

Այդ ընթացքում նա բացատրում է, որ հանելուկի մեջ թեև անմիջականորեն չեն նշվում առարկաները, բայց հիշատակվում են այնպիսի բնութագրիչ հատկանիշներ,

որոնց հիման վրա իմացվում է, թե խոսքն ինչի մասին է: Ուսուցիչը նրանց սովորեցնում է, թե ինչպես որոշել հանելուկը կռահելու գործընթացում իրականացվող տրամաբանական, մտավոր գործողությունների հաջորդականությունը՝ նշված հատկանիշների, կռահվող առարկան, երևույթը բնութագրող բառերի և ենթադրվող պատասխանի համեմատություն, համադրում, ենթադրվող պատասխանի առաջադրում, կռահածի ճիշտ լինելու ապացուցում: Պատասխանը որոնելիս երեխան ինքն է խորամուխ լինում և ստուգում հնարավոր տարբերակները, համեմատում դրանց և հանելուկի մեջ նշված հատկանիշների ընդհանրությունը, փորձում է համոզիչ կերպով ապացուցել, որ պատասխանը ճիշտ է: Հանելուկի կռահմանը հաջորդում է կռահածի վերաբերյալ այլ տեղեկատվության հաղորդում, և դրան բնորոշ այնպիսի հատկանիշների թվարկում, որոնք նշված չէին հանելուկի մեջ: Այդ գործընթացը կարելի է կազմակերպել մտագրոհի մեթոդով, որոնց մի մասը երեխաներն ուսուցչի օգնությամբ դուրս են բերում հանելուկի հետ փոխկապակցված ուսումնական նյութից, մի մասն էլ թվարկում ինքնուրույնաբար: Երեխաների կողմից նշված հատկանիշներին ուսուցիչն ավելացնում է այլ հատկանիշներ ևս և հավելյալ գիտելիքներ հաղորդում կռահածի մասին: Այդ կերպ՝ ընդլայնվում են տվյալ առարկայի կամ երևույթի մասին սովորողների պատկերացումները և նախնական գիտելիքները:

Հանելուկների դասավանդման գործընթացը կարելի է նաև կազմակերպել խաղի ձևով, ինչը խթանում է երեխաների մտավոր ակտիվությունը: Խաղային ձևով ուսուցումը բավարարում է տարրական դասարանի երեխաների տարիքային պահանջմունքները, ապահովում ստեղծագործական աշխատանքի խթանում, նպաստում նրանց վերլուծական, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման ունակությունների զարգացմանը: Նման ձևով ուսուցման կազմակերպումն արդյունավետ է միջանձնային այնպիսի հատկանիշների դրսևորման առումով, ինչպիսիք են՝ կոլեկտիվ աշխատանքը, մտքերի, տեղեկատվության փոխանակությունը, փոխօգնությունը և այլն:[1]

Առաջին դասարանում հանելուկների ուսումնասիրությամբ երեխաները պատկերացում են կազմում դպրոցի, ուսման, գրքի ու գրիչի, տարվա եղանակների,

[1] Ուշինսկի Կ. Մանկավարժական ընտիր երկեր, Երևան 1959, էջ 636:

բնության երևույթների, կենդանիների, մրգերի, տարբեր առարկաների, դրանցից յուրաքանչյուրի օգտակարության, նշանակության, դրանք բնութագրող հատկանիշների մասին:

Հանելուկներին բնորոշ է համեմատությունը և հակադրությունը: Հանելուկների գուշակումը աշակերտից պահանջում է վերացարկման ունակություն, որի զարգացումը նպաստում է հետագա ուսումնական գործունեության արդյունավետության բարձրացմանը: Դրանց միջոցով կարող ենք աշակերտին փոխանցել այնպիսի գիտելիքներ, ինչպիսիք են բառի փոխաբերական և ուղիղ իմաստներին ծանոթանալը, բառիմաստը բացատրելու կարողություն, ընկալելու ունակություն, ինչու ոչ նաև տեղեկություն հաղորդել տարբեր երևույթների և առարկաների մասին: Դասի ժամանակ հանելուկը գործածվում է թե աշակերտների ձեռք բերած գիտելիքների ամփոփման միջոց, թե որպես նոր նյութի հաղորդման, թե որպես դասին հետաքրքրաշարժություն հաղորդող միջոց: Հանելուկի հետ կապված ամեն մի աշխատանք իրականացնելիս պետք է հաշվի առնել տվյալ գործընթացի մեթոդական բոլոր յուրահատկությունները:

Որևէ առարկայի մասին հանելուկ հորինելիս այդ առարկան համեմատվում է շրջապատի երևույթների կամ առարկաների որոշ հատկանիշերի հետ:

Հաճախ հանելուկների մեջ առարկաները երևում են ոչ թե իրենց արտաքին նկարագրով, այլ իրենց կատարած հիմնական դերով: Իսկ քանի որ հանելուկի օբյեկտը՝ առարկաները կամ երևույթները վերցված են լինում շրջապատող իրականությունից, ապա դրանք հիմնականում լինում են կենցաղային ու աշխատանքային գործիքներ ու իրեր:

Կրտսեր դպրոցականները խուսափում են նկարագրություններից: Սակայն դրանք հանելուկների միջոցով հետզհետե պետք է ավելի մեծ տեղ գրավեն նրանց խոսքային գործունեության մեջ: Հանելուկների միջոցով աշակերտների մոտ կարող է զարգանալ բանավոր խոսքը՝ դարձնելով այն ավելի հասկանալի ու տպավորիչ: Հանելուկների հյուսումը երևույթը կամ առարկան գեղարվեստական ձևով նկարագրելու կարողության մշակման հետաքրքիր ձև է:

Նկարագրական դրվագները պետք է գնալով մեծ տեղ զբաղեցնեն աշակերտների խոսքային գործունեության մեջ, քանի որ դրանք գեղեցկացնում և հարստացնում են խոսքը, ձևավորում նրբանկատություն, էականը տարբերելու ունակություն, ամեն ինչի մեջ գեղեցիկն ու արժանին տեսնելու կարողությունը: Այդ տարիքի աշակերտների նկարագրական խոսքի թերությունը կայանում է նրանում , որ նրանք չեն կարողանում դիտարկել այն ամենը ինչի մասին խոսում կամ գրում են:

Նախքան հանելուկի հյուսման ուղղությամբ աշխատանք սկսելը, նախ պետք է նախապատրաստական զրույց իրականացնել դասարանում, բացատրելով, թե ինչ է հանելուկը, ինչ ձևով է լուծվում այն, այնուհետև բացատրել, թե ինչպես է կազմվում հանելուկը:

Մինչ կանցնեն առաջադրանքների կատարմանը, պետք է աշակերտները յուրացնեն, որ հանելուկը բառիմաստի բացատրությունն է: Դրա համար անհրաժեշտ է աշակերտներին ցույց տալ, թե ինչպես միևնույն առարկայի կամ երևույթի մասին հնարավոր է խոսել տարբեր ձևով, նախ հանելուկի լուծման մասին, այնուհետև մանրամասնել հանելուկի իմաստը: Հանելուկի շուրջ աշխատամք իրականացնելիս պետք է օգտվել ԽԻԿ համակարգից: Սովորողների ուշադրությունը պետք է սևեռել հանելուկի հատկանիշներից մեկի՝ փոխաբերության վրա, բացատրել բառերի ուղիղ և փոխաբերական իմաստների դերը գեղարվեստական խոսքում:

Տարբեր հանելուկների գուշակումով և վերլուծելով երխաները հանգում են այն եզրակացության, որ այն առարկայի կամ երևույթի անունը, որը պետք է գուշակվի, երբեք հանելուկի մեջ չի գործածվում, նկարագրվում է առարկայի մի քանի հատկանիշները, որոնց միջոցով աշակերտը կկարողանա գուշակել, հանելուկները կառուցված են համեմատության հիման վրա և այն ձևով նման է բանաստեղծությանը:

Որպեսզի երեխաների գիտելիքները ավելի ամրապնդվեն, ուսուցիչը պետք է հանձնարարի տանը հորինել հանելուկներ՝ իրականացնելով նախապատրաստական աշխատանք.

- ✓ Գտնել հանելուկի առարկայի կամ երևույթի նմանությունները,
- ✓ Կազմել համեմատություն ներկայացնող նախադասություններ,
- ✓ Բառը գործածել փոխաբերական իմաստով,

- ✓ Ստեղծված բնագիրը դարձնել բանաստեղծություն:

Հանելուկների հորինման աշխատանքներ կատարելու ընթացքում աշակերտները պետք է հիշեն, որ.

- ✓ հանելուկը պետք է ունենա մեկ պատասխան,
- ✓ լինի հակիրճ,
- ✓ երևույթը կամ առական ներկայացնել կոնկրետ բառերով,
- ✓ ունենա բանստեղծության ձև:

Այն հանելուկները, որոնք ունեն մի քանի պատասխան, ճիշտ չեն համարվում: Հաճախ աշակերտները, ովքեր առաջին անգամ են փորձում հորինել հանելուկներ, կազմում են հենց այդպիսի հանելուկներ:

Հիմք ընդունելով կրտսեր դպրոցականների մտավոր զարգացման մակարդակը, առանձնացնում ենք հանելուկի ստեղծման և գուշակման հետևյալ պահանջները.

- ✓ Գուշակման համար առաջադրվող հանելուկները պետք է հաջորդեն առարկաների և նրանց հատկանիշների ծանոթության գործընթացին:
- ✓ Հանելուկները պիտի մատչելի լինեն ունկնդրող երեխաներին ինչպես բովանդակությամբ, այնպես էլ՝ կառուցվածքով:
- ✓ Աշակերտները նախ պիտի գուշակեն կամ ստեղծեն հանելուկներ առարկայի բնութագրական հատկանիշների ոչ փոխաբերական նկարագրությամբ, ապա աստիճանաբար ներմուծեն նաև փոխաբերություններ, համեմատություններ և այլն:
- ✓ Հանելուկների գուշակումը պետք է ուղեկցվի դատողություններով, բացատրություններով, մեկնաբանություններով և ընդհանրացումներով:
- ✓ Հանելուկների գուշակումն ու ստեղծումը պիտի իրականացվեն աշխույժ, հետաքրքրություն, զարմանք ծնող մթնոլորտում և կրեն խաղային բնույթ[2]:

Յուրաքանչյուր դասի ընթացքում հնարավոր է իրականացնել հանելուկների ուսուցմանն ուղղված աշխատանքներ: Բայց աշխատանք իրականացնելիս անհրաժեշտ է պահպանել չափավորության պահանջը:

[2] Գյուլամիրյան Ջ. Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2015, էջ 193:

Հանելուկը օգնում է տվյալ իրավիճակը տեսնել պատկերավոր, գտնելով անհայտը, լուծել խնդիրը և փորձարկել սեփական գիտելիքները: Այս բոլորը միասին զարգացնում են աշակերտների տրամաբանական մտածողությունը, ճանաչողական և իմացական գործունեությունը:

Հանելուկային իրավիճակները սովորողների համար հակասություններով լի դժվար կացություն է: Այդ դժվար իրավիճակից դուրս գալու համար աշակերտները օգտագործում են իրենց գիտելիքների պաշարը, կարողություններն ու հմտությունները, տրամաբանում են և առաջարկում խնդրին համապատասխան վարկած:[3]

Որպեսզի տարրական դասարաններում ուսուցումն անցնի արդյունավետ, դրան օգնում է դասերի ընթացքում հանելուկների կիրառումը: Հանելուկների օգտագործումը ակտիվացնում է նույնիսկ պասիվ աշակերտներին:

Կրտսեր դպրոցականները շատ զգայուն են: Ուսուցման սկզբի տարիներին նրանց հետ աշխատանք իրականացնելիս պետք է կարևորել մրցակցություն, ոգևորություն և հետաքրքրաշարժություն առաջացնող պահերը:Այս ամենի արդյունավետ իրագործմանը օգնում է խաղերի կիրառումը:

Մի առարկայի համեմատումը մյուսի հետ նպաստում է որպեսզի աշակերտները կարողանան պատկերացնել անծանոթ առարկաներն ու երևույթները, գտնել դրանց տարբերությունները: Ուսուցչի բացատրությունը շատ մեծ դեր ունի աշակերտի կյանքում, քանի որ այդ դեպքում նյութը դառնում է ավելի պարզ, մատչելի և անմոռանալի:

Դասերի ընթացքում հանելուկները գործածվում են նոր նյութի հաղորդման միջոց, աշակերտների գիտելոքների ամփոփում,դասին հետաքրքրաշարժություն առաջացնող հնար: Շատ կարևոր է նաև աշակերտի խոսքը:

Հանելուկների ուսուցումը ենթադրում է՝ գուշակում, հյուսում և այլ բնույթի աշխատանքներ, որոնք զարգացնում են նաև սովորողների քննադատական մտածողությունը: Այն հանգամանքը, որ երեխան տրամաբանական հաջորդական քայլերով փորձում է համեմատել և հակադրել հատկանիշները, կամ տվյալ հատկանիշները վերագրել ինչ-որ առարկաների և ընդհանրացումներ կատարել,

[3] Հարությունյան Ս. Բանագիտական ակնարկներ, Երևան, 2010, էջ 251:

տրամաբանական մտածողության զարգացման անփոխարինելի վարժանք է: Ժողովրդական մանրապատում ստեղծագործությունները կարևոր դեր են կատարում երեխաների տրամաբանական մտածողության զարգացման գործընթացում: Դրանք հարստացնում են աշակերտների գիտելիքները[a] հանելուկների, շուտասելուկների, առած-ասացվածքների որոշակի պաշարներով: Միաժամանակ երեխաները վարժվում են, տարբեր իրավիճակներում, տեղին օգտագործել առած-ասացվածքներ:

Հանելուկը նպաստում է խնդրահարույց ուսուցման կազմակերպմանը: Այսինքն՝ աշակերտն իր գիտելիքների հիման վրա լուծում է նմանատիպ խնդիրներ, հաղթահարում իրավիճակներ, որոնում գործողության նոր եղանակներ, հասնում վերջնական նպատակին՝ հանելուկի լուծմանը: Խնդրահարույց ուսուցման գերագույն նպատակը սովորողների ստեղծագործական մտածողության զարգացումն է, ինչը կարելի է իրականացնել խնդրահարույց իրավիճակներ հաղթահարելու միջոցով: Նման հնարավորություն աշակերտներին ընձեռում են հանելուկի առաջադրումն ու լուծումը: Հանելուկը դրդում է պատկերավոր տեսնել ու գիտակցել ստեղծված իրավիճակը, որոնել անհայտը, փորձարկել ունեցած գիտելիքները, լուծել պրոբլեմը: Այդ ամենը խթանում է սովորողների տրամաբանական մտածողությունը, իմացական և ճանաչողական գործունեությունը: Աշակերտի ստեղծագործական մտածողությունը զարգացնում է ոչ թե սովորական առաջադրանքը (կամ խնդիրը), այլ պրոբլեմային խնդիրը, որն իրենից ներկայացնում է ճանաչողական դժվարություն, և դրա պատասխանը աշակերտի մտապատկերներում դեռևս չկա: Եթե աշակերտից պահանջենք ցույց տալ ձկան կամ ջրում ապրող որևէ այլ կենդանու կամ թռչունի նկար, ապա նմանատիպ հարցադրումները չեն պարունակում որոնելի անհայտ, ուստի խնդրահարույց չեն: Աշակերտը պետք է գիտակցի հարցից բխող պրոբլեմային իրավիճակը, պրպտի, որոնի ու հայտնագործի նոր բան՝ հարցում ներառված անհայտը գտնելու ճանապարհին:

Օրինակ՝

Թև ունի թեև, սակայն չի թռչում,
Օդում մեռնում է, ջրի մեջ՝ աճում: (ձուկ)

Աշակերտն իսկույն չի կարողանում գտնել հանելուկի պատասխանը, որովհետև նրա նախկին գիտելիքներում այն գաղափարն է, որ եթե թև ունի, ուրեմն պետք է թռչի և անպայման օդում թռչի: Սակայն վերջին տողը նոր որոնումների տեղիք է տալիս. Օդում մեռնում է, ջրի մեջ՝ աճում:

Խնդրահարույց իրավիճակն աշակերտի համար ստեղծված հոգեկան պահն է, դժվար կացությունը, որը լի է հակասություններով: Նա համախմբում է գիտելիքների իր պաշարը, հմտություններն ու կարողությունները, տրամաբանում և առաջադրում վարկածներ:

Տարրական դասարաններում խիստ կարևոր է նաև աշակերտներին հասու դարձնել հանելուկի ստեղծման գործընթացին, երբ գործի են դրվում տրամաբանությունն ու երևակայությունը: Հանելուկի ստեղծումը պահանջում է լարված աշխատանք: Մի քանի հանելուկների վերլուծման օրինակով ուսուցիչն աշակերտին պետք է բացատրի, թե ինչպես է ստեղծվում հանելուկը: Օրինակ, հնում, երբ կային ջրհորներ, որոնցից դույլերով էին ջուր հանում, ստեղծվել էր հետևյալ հանելուկը.

Ցած իջեցնելիս ծիծաղում է,
Բարձրանալիս նա լալիս է:

Առաջին քայլը առարկայի, այսինքն՝ ջրհորի դույլի արտիմաստավորումն է, իր սովորական իմաստից կտրելը:

Երեխաներին հայտնի է, որ դույլը իջնում ու բարձրանում է: Արդեն սկսում են գործել զուգորդություններ ու համեմատություններ, բայց ոչ ամբողջ առարկայի, այլ նրա որևէ հատկանիշի հիման վրա: Այս հանելուկի մեջ վերցվում է կոնկրետ ձայնային հատկանիշը. դույլը ճռճռում է, և այդ ճռճռոցը տարբեր կերպ է հնչում իջնելիս և բարձրանալիս: Իջնելիս թեթև իջնում է, իսկ բարձրանալիս ճռճռում է, ջուրը ցայտում է, և ստեղծվում է փոխաբերությունը. ‘Բարձրանալիս դույլը լալիս է, իսկ իջնելիս’ ծիծաղում:[4] Հանելուկը ստեղծվեց՝ անցնելով արտիմաստավորում-զուգորդում-փոխաբերում փուլերով:

[4] Հարությունյան Ս. Բ. Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, 1960, էջ 27:

Այսպիսի վերլուծությունից հետո կարելի է ցանկացած առարկայի վերաբերյալ ստեղծել հանելուկ: Օրինակ՝ III դասարանում առաջարկեցի հանելուկ կազմել ռետինի մասին: Ռետինին նայելով նրանք պետք է այնպիսի բնորոշում տային, կարծես առաջին անգամ են տեսնում: Ռետինը ուղղանկյունաձև է, նրա առանձնահատկությունն այն է, որ կարող է ջնջել, մաքրել մատիտի կամ գրիչի թողած հետքերը և այդ ընթացքում կարող է սպառվել: Ծնվեց հանելուկը.

Որքան ուտում է,

Այնքան փոքրանում է:

Տարրական դասարանների բոլոր առարկաների դասաժամերին, ինչպես նաև ֆիզկուլտ-դադարներին կիրառելի են նաև ռեբուսները՝ նկարելուկները, որպես հանելուկի տարատեսակ: Նկարելուկները զարգացնում են աշակերտների ուշադրությունը, հիշողությունն ու տրամաբանությունը: Շատ ուսանելի և հետաքրքիր է դառնում դասը աշակերտների համար, երբ նա առաջադրված ռեբուսի պատասխանը գտնելու համար ուշադրությամբ դիտում է նկարները, գտնում համապատասխանություն պատկերվածի միջև, վայելում հայտնագործության բերկրանքը: Ներկայացված ռեբուսների օրինակները երեխաները հաճույքով են լուծում:

Հանելուկի հետաքրքիր և տարրական դասընթացում կիրառելի տեսակներից է կեղծ հանելուկը, որն այս կամ այն ձևով ներառում է պատասխանը:

Այստեղ ուշագրավը ոչ թե հանելուկը լուծելու հարցն է, այլ ունկնդիրների ուշադրությունը բանաստեղծության վրա կենտրոնացնելու, այն կազմող ամեն մի հնչյուն նրբորեն որսալու հմտության ձևավորումը:

Օրինակ՝

Ա-ն ու Բ-ն թառեցին,

Ա-ն ընկավ, Բ-ն ընկավ,

Ո՞վ մնաց լարին: (ու-ն)[5]

Այսպիսի կեղծ հանելուկներում ուղիղ պատասխան չկա. պետք է կենտրոնացնել ուշադրությունը:

[5] Հարությունյան Ս. Բ. Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, 1960, էջ 27:

Օրինակ՝

Անգետի մեկը՝ բողկ՝ բառը

Ցանել մտածեց գարնանը:

Արդ. այս հարցն է մտքում ծագում,

Բո՞ղկ, թե՞ բառեր կաճեն այգում:[6]

Աշակերտը պետք է կարողանա մի կողմ թողնել «թե» հարցը և լարված աշխատել, որպեսզի պատասխանի, որ այգում ոչինչ էլ չի աճի. բողկ աճեցնելու համար սերմ պետք է ցանել, բառերն էլ այգում չեն աճում:

Հանելուկը էապես նպաստում է դպրոցականների մտահորիզոնի ընդլայնմանը և մտավոր ունակությունների զարգացմանը: Այն զարգացնում է երեխայի մտածողությունը, դիտողականությունը, ամրապնդում հիշողությունը: Հանելուկի լուծումը երեխայի համար զվարճալի ժամանց է: Այն ոչ միայն ուրախություն է պատճառում, այլև վստահություն է արթնացնում սեփական անձի նկատմամբ, ընդլայնում նրա գիտելիքները՝ բնության, առարկաների ու երևույթների վերաբերյալ: Միաժամանակ ծանոթացնում է ժողովրդական խոսքի արտահայտչականությանը: Հանելուկների արտահայտչական հնարանքները նպաստում են երեխայի պատկերավոր մտածողության և ստեղծագործական երևակայության զարգացմանը: Հանելուկները բացահայտում են իրականության բազմաթիվ կողմերը և դառնում նրա ճանաչման կարևոր միջոցներից մեկը:

Բացի ճանաչողականից՝ հանելուկներն ունեն դաստիարակչական նշանակություն. երեխաների մեջ սերմանում են հայրենասիրական զգացմունքներ, ոգևորում նրանց, դաստիարակում բարոյականային որակներ:

Ինչպես բոլոր ժամանակներում, այնպես էլ այժմ մարդը շրջապատված է բնության մեծագույն առեղծվածներով, և դրանք ամենից հեշտ ու սրամիտ կլուծի նա, ով մանկուց վարժվել է չընկրկել հանելուկներից և գտնել դրանց պատասխանները:

Հանելուկների օգնությամբ երեխան կարող է ճանաչել բնության օրենքներն ու երևույթները, իրերը, առարկաները, կենդանիներին և դրանց բնորոշ հատկությունները: Հանելուկների պատասխանները գտնելը նպաստում է նաև

[6] Տե՛ս նույն տեղում, էջ 48:

երեխաների աշխարհայացքի ձևավորմանը, կռահելու, արագ կողմնորոշվելու ունակությունների զարգացմանը, արտահայտիչ կարդալու և արտասանելու կարողությունների հղկմանը, ինչպես նաև ուսումնական նյութի բովանդակության ընկալման խորացմանը:

Այսպիսով՝ հանելուկը կայուն տեղ ունի և անհրաժեշտ է կիրառել տարրական դասընթացում: Նրա օգտագործումն ունի ճանաչողական, դաստիարակչական, մտավոր ունակությունների զարգացման անգնահատելի նշանակություն: Տարրական դասարաններում հանելուկներով հարստացված դասերը հետաքրքրաշարժ են ու զվարճալի: Դրանք աշակերտին մեծ բավականություն ու ոգևորություն են պատճառում. հետևաբար արդյունավետ են:

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել կրտսեր դպրոցականի տրամաբանական մտածողության զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքները մայրենիի ուսուցման գործընթացում, տարբեր մեթոդների կիրառումով պարզել դրանց արդյունավետության մակարդակը: Ենթադրում ենք, որ կրտսեր դպրոցականների տրամաբանական մտածողության ցարգացումը արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է ուսումնառության ընթացքում առաջացող խնդիրները բացահայտել, վերհանել և առաջադրել լուծումներ: Կրտսեր դպրոցականի տրամաբանական մտածողության զարգացման, առարկաների միջև իմաստային կապեր գտնելու, առարկաները ճիշտ դասակարգելու, համեմատելու, համադրելու, վերլուծելու, նմանություններն ու տարբերությունները գտնելու կարողությունների ուսումնասիրման նպատակով հետազոտություն ենք անցկացրել ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի Գ. Մնացականյանի անվան թիվ 7 միջնակարգ դպրոցի տարրական դասարաններում: Հետազոտության գործընթացում ընդգրկվել են տարրական դասարանների 4 ուսուցիչ (նրանք և իրենց ուսումնադաստիարակչական գործունեությունը դասերի ընթացքում հանդիսացել են ուսումնասիրության օբյեկտներ)՝ այդ թվում նաև ես՝ որպես տարրական դասարաննեի դասվար և 18 աշակերտ:

Հետազոտության իրականացման համար ընտրվել են հետևյալ մեթոդները.

- Իրականացվել է բանավոր հարցում ուսուցիչների համար՝ կրտսեր դպրոցական տարիքում սովորողների տրամաբանությունը զարգացնելու գործընթացում առաջացած դժվարությունները, առավելությունները, թերությունները գտնելու, դասագրքերի և մեթոդական ձեռնարկների ընձեռած հնարավորությունները բացահայտելու նպատակով:
- Ուսումնասիրվել է 4-րդ դասարանի աշակերտների ուսման առաջադիմությունը մայրենիի դասընթացից:

- Կիրառվել է կրտսեր դպրոցականի տրամաբանական գործողությունների զարգացման մակարդակի ուսումնասիրություն տարատեսակ առաջադրանքների միջոցով:
- Ուսումնասիրվել են տարրական դասարանի դասագրքերը, մայրենիի տարրական դպրոցի ծրագիրը, ուսումնամեթոդական նյութերը:
- Կիրառվել են հանելուկների միջոցով կրտսեր դպրոցականների տրամաբանական մտածողության զարգացմանն ուղղված տարաբնույթ առաջադրանքներ: Ստորև ներկայացվում են այդ աշխատանքների նպատակը և նկարագրությունը:

Արձանագրող փուլ

Դիտման մեթոդով արձանագրեցինք, որ ուսումնառության գործընթացում բավականաչափ տեղ է հատկացվում սովորողների իմացական և զգայական ոլորտների համաչափ զարգացմանը, ուսուցիչների կողմից աշխատանք է տարվում աշակերտների մոտ քննադատական, վերլուծական, ստեղծագործական կարողությունների զարգացման ուղղությամբ:

Հանելուկները երեխաների ուշադրությունը, մտածողությունը որևէ երևույթի վրա կենտրոնացնելու լավագույն միջոց են հանդիսանում, որի միջոցով զարգանում է աշակերտների նկարագրական խոսք կառուցելու կարողությունները, լեզվամտածողությունը:

Այսպիսի աշխատանքներից հետո երեխաները աստիճանաբար կարողանում են գիտակցորեն կառավարել իրենց հիշողությունը, կարողանում են մտապահել և մտաբերել պահանջվող բառը, նախադասությունը:

Հանելուկների լուծման ընթացքում սովորողները հանդիպում են որոշ դժվարությունների: Հանելուկը լուծելիս երեխաները գործի են դնում իրենց հնարամտությունը, երևակայությունը, պատկերավոր մտածողությունը, շղարշված պատկերի տակ տրված առարկայի էական հատկանիշները ի հայտ բերելու կարողությունները:

Սակայն կրտսեր դպրոցականները խուսափում են նկարագրություններից, երեխաների խոսքի թերությունները խոչընդոտ են հանդիսանում, որպեսզի

աշակերտները խոսքով դիտարկեն, առանձնացնեն կարևորները կամ առարկայի ամբողջական նկարագիրը:

Ուսուցիչների շրջանում իրականացված հարցազրույցի արդյունքում պարզվեց, որ տրամաբանական մտածողության զարգացման աշխատանքների ընթացքում աշակերտները, իրենց գիտելիքները հարստացնելու նպատակով, պասիվ ընկալողի դերը փոխարինում են ակտիվ մասնակցի դերով՝ կատարելով վերլուծական աշխատանք: Տրամաբանական մտածողության զարգացմանն ուղղված աշատանքներում դասվարները կիրառում են և՛ պասիվ, և՛ ակտիվ մեթոդներ:

Այնուհետև ստացված արդյունքները համալրելու համար կիրառելի են այդ տարիքի համար նախատեսված՝ մտածողության և երևակայության հետազոտման մեթոդը:

- *Զևավորող փուլ:*

Ստացված տվյալները թույլ են տալիս անցկացնել շտկողական աշխատանք՝ կիրառելով առաջադրանքների ու վարժությունների շարք, որտեղ ներառված են հանելուկներ: Զևավորող փուլի հիմնական նպատակը երեխաների տրամաբանական մտածողության զարգացումն է, ինչը, կարևոր նշանակություն ունի անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման գործում, և, միաժամանակ, տարրական դպրոցը մտածողության այս տեսակի զարգացման համար կարևոր շրջան է համարվում: Նպատակի իրագործման համար ընդգրկվել և ուսումնասիրվել են տարաբնույթ պարապմունքներ և խաղեր:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ:

Հետազոտության ընթացքում առաջին հերթին ուսումնասիրել ենք «Մայրենի» դասընթացից աշակերտների առաջադիմության արդյունքները 4-րդ դասարանում: Դասարանի 18 աշակերտներից 5-ը ունեն գերազանց առաջադիմություն, 6-ը՝ լավ առաջադիմություն, 7-ը՝ բավարար առաջադիմություն.

Առաջադիմությունը	***Աշակերտների քանակը***
Գերազանց	5
Լավ	6
Բավարար	7

Բանավոր հարցաշարի միջոցով անցկացվել է հարցախույզ տարրական դասարանի դասվարների շրջանում:

Հարցման արդյունքների վերլուծությունից երևում է, որ տրամաբանական մտածողության զարգացման աշխատանքների ընթացքում աշակերտները, իրենց գիտելիքները հարստացնելու նպատակով, պասիվ ընկալողի դերը փոխարինում են ակտիվ մասնակցի դերով՝ կատարելով վերլուծական աշխատանք: Տրամաբանական մտածողության զարգացմանն ուղղված աշատանքներում դասվարները կիրառում են և՛պասիվ, և՛ակտիվ մեթոդներ:

Դասագրքերում հանդիպում են հանելուկների տարբեր տեսակներ՝ բնական երևույթների մասին, կենդանիների, բույսերի, սարքերի, տառերի և այլն: Դասվարների կողմից հանելուկները հիմնականում կիրառվում են որպես նոր նյութի հաղորդման, աշակերտների ձեռք բերած գիտելիքների ամփոփման, բառի ուղիղ և փոխաբերական իմաստը բացատրելու, համեմատելու, ընկալելու տարրական գիտելիքներ հաղորդելու նպատակով:

Նրանք նշել են նաև, որ 1-ին դասարանում ավելի շատ ժամանակ հատկացնում են շուտասելուկներին և սուտասելուկներին, 2-4–րդ դասարաններում՝ առածներին, ասացվածքներին, հանելուկներին և դարձվածքներին:

Տրամաբանական մտածողության զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքների ընթացքում 1-ին դասարանի նախապրբենական շրջանում հաճախակի են կիրառում տարբեր խաղեր («Ինչո՞վ են տարբերվում», «Փոխակերպում», «Բառը բառի մեջ», «Գլուխկոտրուկներ», «Ինչն է ավելորդ», «Լաբիրինթոսներ»,« Խաղ - խնդիրներ», «Վանկախաղեր», «Ո՞ր բառերն են ընկերներ», «Շարունակի՛ր» և այլն), ուսուցման ակտիվ մեթոդներ, ուսուցման պասիվ մեթոդներ, ակտիվ մտավարժանքներ: Պատկերը հետևյալն է.

Առաջադրանքը	***Թիվը***
Խաղերի կիրառում	4
Ակտիվ մեթոդների կիրառում	5
Պասիվ մեթոդների կիրառում	4
Փոխգործուն մեթոդական հնարներ	2
Զրույցի տարբեր տեսակներ	3

Ձևավորող փուլ:

Տարրական դասարանների նշված ուսուցիչների կողմից ընտրվում և գործնականում իրականացվում են ձևավորող և զարգացնող դիդակտիկական խաղեր ու առաջադրանքներ՝ սովորողների ուշադրության, հիշողության, երևակայության, ստեղծագործական և տրամաբանական մտածողության, վերլուծական-համադրական կարողության ձևավորման ուղղությամբ, ձևավորում դրական վերաբերմունք և հետաքրքրություն այդօրինակ աշխատանքների նկատմամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով և վերլուծելով գրականագիտական, մանկավարժական, մեթոդական գրականությունը, հանրակրթական չափորոշիչները, ուսումնական ձեռնարկներն ու դասագրքերը, ինչպես նաև հիմնվելով մեր կողմից կատարած հետազոտական աշխատանքների արդյունքների վրա կարելի է եզրակացնել, որ.

1. Հայ ժողովրդական բանահյուսության նմուշների ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի ուսումնական գործընթացում, քանի որ դրանք նպաստում են երեխաների արժեհամակարգի ձևավորմանը, գեղեցիկը, բարին, մարդկայինը տեսնելու, ընկալելու, գնահատելու, լավն ու վատը, չարն ու բարին տարբերակելու կարողությունների մշակմանը: Բանահյուսական նյութերի ուսումնասիրումը երեխաներին օգնում է հաղորդակից դառնալ գրականության տարբեր ժանրերում ամրագրված հոգևոր և բարոյական արժեքներին,
2. Հանելուկի վերծանմամբ զարգանում է երեխայի տրամաբանությունը, ձևավորվում եզրահանգում կատարելու կարողությունը, ինչն էլ նրա ստեղծագործական ունակությունների հիմքն է դառնում: Հանելուկների ուսումնասիրումը սերտորեն կապվում է ուսումնական հիմնական նյութի հետ, նպաստում դրա հեշտ յուրացմանը, դասանյութի առավել հետաքրքիր մատուցմանը:
3. Հանելուկը կայուն տեղ ունի և անհրաժեշտ է կիրառել տարրական դասընթացում: Նրա օգտագործումն անգնահատելի նշանակություն ունի ճանաչողական, դաստիարակչական, մտավոր ունակությունների զարգացման համար: Տարրական դասարաններում հանելուկներով հարստացված դասերը հետաքրքրաշարժ են ու զվարճալի: Դրանք աշակերտին մեծ բավականություն ու ոգևորություն են պատճառում. հետևաբար արդյունավետ են:
4. Հանելուկների ուսուցումը ենթադրում է՝ գուշակում, հյուսում և այլ բնույթի աշխատանքներ, որոնք զարգացնում են նաև սովորողների քննադատական մտածողությունը: Այն հանգամանքը, որ երեխան տրամաբանական հաջորդական քայլերով փորձում է համեմատել և հակադրել հատկանիշները, կամ տվյալ

հատկանիշները վերագրել ինչ-որ առարկաների և ընդհանրացումներ կատարել, տրամաբանական մտածողության զարգացման անփոխարինելի վարժանք է:

5. Սովորողների պատկերավոր մտածողությունը, ստեղծագործական միտքը, հաղորդակցական, համագործակցային և ինքնուրույն գործունեության ունակությունները զարգացնելու, նրանց սոցիալականացմանը նպաստելու, ինչպես նաև տրամաբանական, ճանաչողական և երևակայական կարողություններ ու հմտություններ ձևավորելու նպատակով բանահյուսական նյութերն ուսումնասիրելու գործընթացում առանձնակի կարևորվում է ուսուցման ավանդական և ժամանակակից մեթոդների զուգակցումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ալեքսանյան Լ. Պ. Զգայական ու տրամաբանական իմացության փոխկապվածությունը ուսուցման գործընթացում, էջ 169-173:
2. Ալեքսանյան Թ. Խոսքի ուսուցումը միջին դպրոցում, Երևան, Էդիթ Պրինտ հրատարաչկություն, 2012, 192 էջ:
3. Աստվածատրյան Մ. և ուրիշներ Բազմաբնույթ մտածողության տեսության կիրառումը ուսուցման վաղ շրջանում, Ար., ԱՅՐԵՔՍ, 2004, Ոսկան Երևանցի հրատարակչություն, 288 էջ:
4. Արնաուդյան Ա. և ուրիշներ Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար, Եր., 2004, 180 էջ:
5. Գյուլամիրյան Ջ. Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, Զանգակ հրատարակչություն, 2015, 316 էջ:
6. Գյուլամիրյան Ջ. Խոսքի զարգացում. տեսություն և պրակտիկա, Երևան, Զանգակ հրատարակչություն, 2013, 296 էջ:
7. Գյուլբուդաղյան Ս. Հայոց լեզվի մեթոդիկա, Եր., ԵՀՀ, 1978, 324 էջ:
8. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն. Մայրենի 4 մեթոդական ձեռնարկ, Երևան, 2009, 112 էջ:
9. Թունյան Ջ. Ե., Երիցյան Լ. Մ. Կրտսեր դպրոցականի հոգեբանություն, Երևաո, ԷՆ-ՎԵ Փրինթ հրատարակչություն, 2013, 288 էջ:
10. Խոսք և հաղորդակցում. մեթոդական ձեռնարկ տարրական դպրոցի ուսու ցիչների համար, Եր., Մանմար, 2011, 95 էջ:
11. Հարությունյան Ս. Բանագիտական ակնարկներ, Երևան, 2010, 251 էջ:
12. Նորսոյան Լ. Ժողովրդական մանրապատում ստեղծագործությունների դերը տրամաբանական մտածողության զարգացման գործում, Նախաշավիղ ամսագիր, N 1, Երևան, 2017, էջ 8:
13. Սարգսյան Վ. Այբբենարան, հանրակրթական դպրոցի դասագիրք, Եր., Մանմար հրատարակչություն, 2017, 156 էջ:

14. Սարգսյան Վ. Այբբենարանի ուղեցույց, Եր., Մակմիլան, 2007, 195 էջ:
15. Վարդումյան Ս. և ուրիշներ Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, ԱՅՌԵՔՍ, Եր, 2003, 405 էջ:
16. Տեր-Գրիգորյան Ա. Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980, 564 էջ:
17. Ուշինսկի Կ. Մանկավարժական ընտիր երկեր, Երևան, 1959, 636 էջ:
18. Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ. Մայրենի 2, հանրակրթական դպրոցի դասագիրք, Երևան, Էդիտ Պրինտ հրատարակչություն, 2007, 159 էջ:
19. Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ, Մայրենի 2 ուսուցչի ձեռնարկ, Երևան, 2009, 84 էջ:

II. Համացանցային կայքեր

1. Հանրակրթական պետական չափորոշիչ, https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2011/07/111088.pdf, 29.03.2019:
2. Հանրակրթության պետական կրթակարգ, http://www.irtek.am/views/act.aspx?aid=25829, 29.03.2019:
3. www.aniedu.am:
4. www.ktak.am:
5. www.edu.am: